ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2025 ԹՎԱԿԱՆԻ N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ, 37-րդ հոդվածներով և «Պետական գույքի կառավարման մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի «Պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 595-Ն որոշման N 1 հավելվածի

- 5-7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Քաղաքացիներին նախկին հանրակացարանային կամ հանրակացարանային բնակելի տարածքներն անհատույց օգտագործման են տրամադրվում, եթե՝

- ընտանիքի առնվազն մեկ անդամը հանդիսանում է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձ և ստացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, և
- ընտանիքի բոլոր անդամները Հայաստանի Հանրապետությունում չունեն սեփականության (ներառյալ՝ բաժնային կամ համատեղ սեփականության) կամ օգտագործման իրավունքով բնակելի

տարածություն, և

- ընտանիքի բոլոր անդամները պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում երբևէ բնակարան (բնակելի տուն) ձեռք չեն բերել կամ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն չեն ստացել, և
- ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ու անապահովության միավորը բարձր է 0 միավորից կամ ««Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 185 տոկոսի արժեքից և ընտանիքի անապահովության գնահատման կարգով ճանաչվել է սոցիալապես անապահով։

6. Հանրակացարանային կամ հանրակացարանային բնակելի ազատ տարածքների մասին տեղեկատվությունը ստանալուց հետո (առկայության դեպքում) 10 օրացուցային օրվա ընթացքում Կոմիտեն ներկայացնում է հարցում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Կադաստրի կոմիտեին, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը՝ իրեն դիմած՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած
անձանց հանրակացարանային շենքում կացարանով ապահովման նպատակով։

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված մարմինները հարցումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Կոմիտեին տրամադրում են հետևյալ տեղեկատվությունը՝

- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ Կոմիտե դիմած անձի կամ ընտանիքի անապահովության միավորի կամ աստիճանի մասին.
- Կադաստրի կոմիտեն՝ Կոմիտե դիմած անձի կամ ընտանիքի բոլոր անդամների Հայաստանի Հանրապետությունում սեփականության (ներառյալ՝ բաժնային կամ համատեղ սեփականության) կամ օգտագործման իրավունքով բնակելի տարածություն ունենալու կամ չունենալու մասին.
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը՝ Կոմիտե դիմած անձի կամ ընտանիքի՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձ հանդիսանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած լինելու (լինելու) մասին։».
- 9-րդ կետի «4-րդ և 5-րդ ենթակետերի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով.
- 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ ենթակետով.

«4) քաղաքացիների դեպքում՝ անձի կամ ընտանիքի բոլոր անդամների անձը հաստատող փաստաթուղթը։».

- 13-րդ կետից հանել «(բացառությամբ՝ սույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետի)» բառերը.
- 16-րդ կետում հանել «քաղաքացիների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության,» բառերը։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության ու պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող բնակելի տարածքներինվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին նվեր ընդունելու լիազորություններ վերապահելու մասին» N 2037-Ն որոշումը լրացնել նոր 8.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝

«8.1. Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և N 3 հավելվածը ուժը կորցրած ճանաչել 2030 թվականի հունվարի 1-ից։»։

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» N 330 որոշումը ճանաչել ուժը կորցրած։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։